

ՏԵՂԱՅԻՆ ՍԵՄԻՆԱՐՆԵՐ

- ✓ 2012թ. հունվարի 20-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կոյունջյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության և դասակարգիչների բաժնի պետ Լ. Պետրոսյանը, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Գենդերային վիճակագրություն» խորագրով աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2012թ. փետրվարի 6-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Ուսումնասիրություն տնտեսության ճյուղերում՝ իրականացված 2011թ. հունիս-հոկտեմբեր ամիսներին» աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2012թ. փետրվարի 8-9ը ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և նույն բաժնի առաջատար մասնագետ Զ. Ավոյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Հայաստանում աշխատավարձի քաղաքականությունը» թեմայով սեմինար-կլոր սեղանին,
- ✓ 2012թ. փետրվարի 14-ին ՀՀ ՎՊԽ խորհրդի անդամ Յու. Պողոսյանը մասնակցել է ք.Երևանում կայացած «Մաքուր էներգիա և ջուր» ծրագրի ներկայացմանը,
- ✓ 2012թ. փետրվարի 20-24ը և 27-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել է ք. Երևանում կայացած «Վիճակագրական վերլուծությունների հիմունքները սոցիալական հետազոտություններում՝ SPSS փաթեթի կիրառմամբ» թեմայով մեթոդաբանական խորացված դասընթացին,
- ✓ 2012թ. փետրվարի 24-ին ՀՀ ՎՊԽ խորհրդի անդամներ Գ. Գևորգյանը և Վ. Դավթյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի զարգացման

աջակցության ծրագրի «Ժողովրդավարական կառավարում» աշխատանքային խմբի 2011թ. տարեկան վերանայմանը,

- ✓ 2012թ. փետրվարի 24-ին ՀՀ ԱՎԾ աշխատակազմի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Ա. Սաֆյանը, սոցիալական ոլորտի և բնապահպանության վիճակագրության բաժնի պետ Ն. Բաղդասարյանը, տնային տնտեսությունների հետազոտությունների բաժնի պետ Դ. Մարտիրոսովան մասնակցել են ք. Երևանում կայացած «Երեխաների և ընտանիքների սոցիալական բարեկեցությունը Հայաստանում՝ ինտեգրացված սոցիալական ծառայությունների միջոցով» մեկ տարվա փորձնական ծրագրի արդյունքների ներկայացմանը: